

DECEMBER 1989 ՆԻԼ ԵՈՐՔ - ՊԵԿՏԵՄԲԵՐ 1989  
NEW YORK  
EGGISE ST. VARTAG

D 150000  
H. C. ZINGIRYAN

Պրն. Յովհաննէս Չիլինկիրեանի ելոյթը  
Ռուբէն ՍԵԼԱԿԻ յիշատակի ոգեկոչման հանդիսութեան  
ՆԻԼ ԵՈՐՔԻ Ս. ՎԱՐՈՒԱՆ ԵԿԵՂԵՑԼՈՅ ՄԷՋ  
Թորգոմ Մանուկեան Սրբազանի նախագահութեամբ

Բարձրաշնորհ Սրբազան Հայր, Հոգեշնորհ Հայր Սուրբ ԵԼ  
սիրելի հայրենակիցներ,

Մենք անձնապէս այսօր հոս կը գտնուինք Ռուբէն ՍԵԼԱԿԻ  
Մշակութային Հիմնարկի անունով մեր  
երախտագիտութեան զգացումները յայտնելու Ամերիկայի  
մէջ Ռուբէն ՍԵԼԱԿԵԱՆ ոգին հայ ժողովուրդին  
ծանօթացնելու համար աշխատող հայ մշակոյթի  
արժանաւոր ներկայացուցիչներուն ԵԼ մա՛նաւանդ ՆԻԼ  
Ծըրզիի հայկական ծայնասփիւռի հիմնադիր տնօրէն Պրն.  
Վարդան Ապտոյին ԵԼ իր գործակից ընկերներուն:

Ռուբէն ՍԵԼԱԿ 24 Ապրիլ 1915ին թրքանալու պայմանաւ  
ազատուելու առաջարկը մերժեց: Նախընտրեց մեռնիլ  
քան թէ թրքանալ: Այս ձեւով Ռուբէն ՍԵԼԱԿ ժողովուրդին  
ցոյց տուաւ անձնագոհութեան ճամբան, Վարդանանցի  
հերոսներու նման, որոնք նահատակուեցան վասն  
հայրենեաց ԵԼ վասն հաւատքի:

Ազգ մը իր հերոսներով կ'ապրի: Ազգ մը որ հերոսներ  
չունի ապրելու իրաւունք չունի: Ազգ մը որ իր հերոսները  
կը մոռնայ ինքն ալ մեռնելու դատապարտուած է: Ազգ մը  
միա՛յն իր առաջնորդներով արժանի կ'ըլլայ ապրելու:  
Արեւմտեան Հայաստանի ջարդուած հայ ժողովուրդին  
բեկորները եղող հայ Սփիւռքը, այսինքն՝ մենք, դուք,  
անոնք, եթէ մոռնանք մե՛ր հերոսները, մե՛ր  
նահատակները ԵԼ մե՛ր հողերը Թալէաթին երազը  
կ'իրականանայ, այն Թալէաթը որ հայ ազգը միայն  
թանգարաններու մէջ տեսնելու դատապարտած էր:

Խորքին մէջ ի՞նչ կը նշանակէ Սփիւռքի մէջ հայ ըլլալ:  
Ծնունդէ Ծնունդ, Զատիկէ Զատիկ եկեղեցի երթա՞լ եւ  
կամ տարին անգամ մը հայկական հանդէսներու  
մասնակցիլ: Ասիկա յուսախաբուրթիւն է:

Ռուբէն Սեւակ 1911-ին, եղեռնէն ճիշդ չորս տարի առաջ  
սապէս կ'ըսէր.-

«Սակայն ստոյգ, ստոյգ կ'ըսեմ ձեզի վտանգը մեծ է, շատ  
մեծ, աւելի մեծ քան կրնաք ենթադրել...»: Դժբախտաբար  
1915-էն մինչեւ այսօր Ռուբէն Սեւակի մարգարէական այս  
նախատեսութիւնը ամէն օր կ'իրականանայ: Հայութեան  
վերջին յոյսը եղող մեր փոքր հայրենիքին ենթարկուած  
ճգնաժամի այս օրերուն եկէ՛ք ընտրենք  
տրամաբանութեան եւ խելքի ճամբան: Այս առթիւ  
կ'ուզենք յիշել 1987-ին Նիսի Ռուբէն Սեւակի Յիշատակի  
Տունը այցելող Հայաստանի Գրողներու Միութեան  
նախագահ Վարդգէս Պետրոսեանի խօսքերը.-

«Վրաստանի Գրողներու Միութեան նախագահը օր մը  
հետեւեալը ըսաւ ինծի. եթէ մենք վրացիներս ունենայինք  
հայերուն ունեցած սփիւռքը, այսօր Սովետական  
Միութեան ամենէն մեծ ուժը կ'ըլլայինք»: Սփիւռքի այն  
մեծ ուժը որ ունին հայերը երբեք չկարողացան գործածել  
ցեղասպան թուրքին դէմ: Երբեք չկարողացան գործածել  
հայուն կորսուած հայրենիք Արեւմտեան Հայաստանը ետ  
առնելու համար, որովհետեւ կարելի չեղաւ Սփիւռքի  
միացեալ ճակատը կազմել: Բոլորս ալ գիտենք թէ  
հայութեան ո՛ր հատուածը արգելք եղաւ այս միութեան:

Այսօր մեր հայրենիքի այս ճակատագրական օրերուն  
եկէ՛ք միանանք յանուն հայրենիքի կազմելով Սփիւռքի  
միացեալ ճակատը, որովհետեւ միա՛յն հայրենիքն է  
իրականը, միա՛յն հայրենիքն է յաւիտեանը:

Մենք այսօր հոս ուրախութիւնը ունինք 45 տարիէ ի վեր  
մեր սրտին վրայ կեցած երախտագիտութեան պարտքը  
վճարելու ձեր մէջ գտնուող շատ յարգելի մէկ  
անձնաւորութեան: 1945ին Պոլիս էինք: Կեդրոնական

վարժարանի ուսանող մէկ ընկերոջ ճամբով տեղեկացանք, թէ Սուրբ Փրկիչ հայկական հիւանդանոցը թոքախտէ տառապող Կարապետ Ծանճիկեանը մեզ տեսնել կ'ուզէ: Կարապետ Ծանճիկեան մեզի ծանօթ էր իր բանաստեղծութիւններով: Պոլսոյ գրական շրջանակներուն ծանօթ եղողները գիտեն թէ Կարապետ Ծանճիկեան հայ բանաստեղծութեան մէջ նոր շրջան մը բացող շատ արժէքաւոր արուեստագէտ մըն է: Հիւանդանոց գացինք եւ իրեն այցելեցինք: Ան մեզի նուիրեց գիրք մը եւ անկէ շաբաթ մը վերջ մահացաւ, շատ երիտասարդ տարիքին: Այդ գիրքը Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւններու հաւաքածոն էր: Իր նահատակութենէն ետք հրատարակուած առաջին բանաստեղծութեան գիրքն էր, տպուած 1944ին, Երուսաղէմի Սուրբ Յակոբեանց Վանքին նախաձեռնութեամբ: Հատորը պատրաստողը յառաջաբանը ստորագրած էր Թ. անունով: Այդ Թ. գիրին ո՞վ ըլլալը երկար տարիներ մեզի անծանօթ մնաց: Հազիւ միայն քանի մը տարի առաջ տեղեակ եղանք թէ ո՞վ էր Թ. ստորագրեալը: Սեւակի գիրքը հրատարակողը 1944-ին 25 տարեկան վարդապետ եւ այսօր Ամերիկայի Արեւելեան թեմին առաջնորդ բարձրաշնորհ Տէր Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանն էր (ծափահարութիւններ):

45 տարիներ յետոյ այսօր մեր երախտագիտութիւնը կը յայտնենք սիրելի Սրբազան Հօր: Մեզի համար շատ ակելի ուրախալի առիթ մըն է որ ներկայ ենք իր քահանայական ձեռնադրութեան 50-ամեակի եւ ծննդեան 70-ամեակի զոյգ տարեդարձներուն: Այս առթիւ սրտանց կը շնորհակտորենք Սրբազանը:

Նիւ Եորքի մեր եղբայրներէն կանոնաւորապէս կը ստանանք Նիւ Ճորճիի ձայնասփիւռի հաղորդումներուն ձայներիզները եւ մենք ալ մեր կարգին զանոնք կը բաժնենք Ֆրանսայի եւ Զուլիցերիոյ հայերուն: Այս ճամբով Նիւ Ճորճիէն, Վարդան Ապտոյի եւ իր գործակիցներու ձայնը կը տարածուի Սփիւռքի մէջ: Մենք հիացումով կը հետեւինք տնօրէնին աշխատանքներուն: Ըսեմ, թէ Նիսի մէջ հազիւ ամիսը անգամ մը հայկական ձայնասփիւռի

Ժամ ունէինք, որուն հաղորդաժամը դադրեցաւ կարգ մը շ  
դժուարութիւններու պատճառաւ: Պրն. Վարդան Ապտո  
եւ իր գործակիցները տասը տարիներէ ի վեր կը  
շարունակեն այս դժուարին աշխատանքը՝ ի շահ հայ  
մշակոյթին, տարածելով հայ ոգին, հայրենիքի ձայնն ու  
սէրը հայութեան մէջ: 1988-էն սկսեալ Պրն. Վարդան  
Ապտոն եւ իր ընկերները ծանօթացնել սկսան Ռուբէն  
Սեւակը, անոր կեանքը, անոր ստեղծագործութիւնները,  
անոր գաղափարախօսութիւնը: Այս ճամբով  
ձայնասփիւռի տղաքը օգտակար հանդիսացան հայ  
ժողովուրդին մէջ ներմուծելու Ռուբէն Սեւակեան  
զոհաբերութեան ոգին: Այս պատճառաւ 1989-ին Ռուբէն  
Սեւակի անուան գրական առաջին մրցանակը  
յատկացուած է Նիւ Երրզիի հայկական ձայնասփիւռի  
հիմնադիր տնօրէն Պրն. Վարդան Ապտոյին:

Սրտանց կը շնորհաւորենք մրցանակակիր Վարդան  
Ապտոն:

Շնորհակալութիւն ձեր բոլորին:

Միկայէլ Բէր 1989  
Ապրիլ 20-ին Նիւ Երրզի  
NEW YORK

Յակոբ Բէն Զեյն  
Նիւ Երրզի